Հավելված 2
2025 թ. «հունվարի» «15»-ին կնքված
«1032-11002/2025-ԱՎ» պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N_4_

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | 1032-11002/2025-ԱՎ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2025-31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2025-31.12.2025 |
| **Ներկայացման օր** | 23.12.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Նաիրա Առաքելյան,<br>ՀԿ Նախագահ |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները. <br><br>• **Շահառուների կարիքների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2 շահառուների կարիքների գնահատում համապատասխան մեթոդաբանությամբ, որի արդյունքում ստացել ենք հստակ նկարագիր շահառուի կարիքների վերաբերյալ: Նրանք Արմավիր քաղաքի բնակիչներ են՝ տարեց և հաշմանդամություն ունեցող անձիք: <br><br>• **Անհատական սոցիալական ծրագրի մշակում.** Գնահատման արդյունքում սոցիալական աշխատողի գլխավորությամբ մասնագիտական թիմը մշակել է յուրաքանչյուր շահառուի անհատական սոցիալական ծրագիրը: Հաշվի առնելով յուրաքանչյուր շահառուի կարիքները, հնարավորություններն ու առանձնահատկությունները՝ ստեղծվել է հստակ գործողությունների պլան, որի հիման վրա կազմակերպվում և մատուցվում են համապատասխան սոցիալական ծառայություններ: <br><br>• **Շահառուների հետ պայմանագրերի կնքում**. Կարիքները գնահատված շահառուների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագիր, որը թույլ է տալիս ունենալ իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև: <br><br>• **Ամենօրյա խնամքի ծառայությունների մատուցում**. Ըստ շահառուների հետ կնքված պայմանագրի, ծառայությունների մատուցման ժամանակացույցի և անհատական սոցիալական ծրագրի՝ ծրագրի հաշվետու ժամանակահատվածում շահառուներին մատուցվել են խնամքի անհրաժեշտ ծառայություններ շահառուների տանը՝ կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալական խորհրդատվության տրամադրում: <br><br>Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը թիմի աշխատակիցներին ծանոթացրեց նոր ընդունված տարեցների հետ: |

Ծանոթացրեց յուրաքանչյուր շահառուի հետ տարվող աշխատանքներին՝ մանրամասնորեն ներկայացնելով նրանց սոցիալական վիճակը, կարիքները և առանձնահատկությունները: Ներկայացրեց աշխատանքի բովանդակությունը, գործառույթները և մասնագիտական պարտականությունները:

Սոցիալական աշխատողը յոթ շահառուի համար աջակցել է սոցիալական նպաստի տարեկան փաստագրական գործընթացում՝ անհրաժեշտ փաստաթղթերն ու դիմումները ներկայացնելով Արմավիրի միասնական սոցիալական ծառայություն (ՄՍԾ) ՏԿ:

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը վեց շահառուի համար ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը ՄՍԾ՝ եռամսյակային հրատապ օգնություն ստանալու նպատակով:

Սոցիալական աշխատողը աջակցել է մեկ թոշակառուի՝ թոշակի վճարման անկանխիկ եղանակին անցնելու գործընթացում: Բացի այդ, սոցիալական աշխատողը սոցիալական օգնականի հետ միասին, ցուցաբերել է խորհրդատվական և գործնական աջակցություն երկու տարեց անձանց՝ նոր անձնագիր ստանալու գործընթացում՝ ուղեկցելով փաստաթղթերի պատրաստման և համապատասխան մարմիններին դիմելու փուլերում:

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը աջակցել է մեկ հաշմանդամություն ունեցող տարեց շահառուի՝ լոգարանի աթոռակի տրամադրման համար անհրաժեշտ օժանդակ միջոցների ձեռքբերման գործընթացում: Այդ նպատակով պատրաստվել և Արմավիրի միասնական սոցիալական ծառայություն են ներկայացվել համապատասխան դիմումներ:

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի նախաձեռնությամբ, ինչպես նաև սոցիալական օգնականների աջակցությամբ յոթ տարեց շահառուների համար ներկայացվել են դիմումներ մարզպետարան՝ դրամական աջակցություն ստանալու նպատակով: Այդ գործընթացի շրջանակում Միասնական սոցիալական ծառայությունից ձեռք է բերվել համապատասխան միավորի տեղեկանք, հավաքագրվել և ամբողջական փաթեթով ձևակերպվել են բոլոր շահառուների անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք սահմանված կարգով ներկայացվել են համապատասխան բաժին:

Սոցիալական աշխատողի միջնորդությամբ 4 տարեց անձի Կարմիր Խաչից տրամադրվել է սննդի և հիգիենայի փաթեթ:

Բուժքույրերը սոցիալական աշխատողի հետ համագործակցությամբ հաշվետու ժամանակահատվածում երեք տարեց շահառուների ուղեկցել են բժշկական հաստատություն՝ համալիր հետազոտություններ անցնելու նպատակով: Տարեցներից մեկին նշանակվել է ԼՕՌ բժշկի խորհրդատվություն, որի ընթացքում իրականացվել են համապատասխան հետազոտություններ և առաջարկվել է կատարել լսողության աուդիոմետրիա: Բացի այդ, իրականացվել են անհրաժեշտ լաբորատոր հետազոտություններ, ինչպես նաև կազմակերպվել են նյարդաբանի, գինեկոլոգի, մաշկաբանի և տեղամասային բժշկի խորհրդատվություններ:

Մեկ տարեց շահառուի համար բժշկի կողմից նշանակվել է դեղորայքային համալիր բուժում, որի իրականացումը կազմակերպվել է համապատասխան վերահսկողությամբ: Երկու տարեց շահառուների համար բուժքույրերի կողմից տնային պայմաններում իրականացվել են միջմկանային ներարկումներ՝ յոթօրյա ընթացքով՝ ապահովելով բուժման շարունակականությունն ու շահառուների առողջական վիճակի վերահսկումը:

Բուժքույրը սոցիալական աշխատողի հետ համագործակցությամբ կազմակերպել է երկու տարեց շահառուների արյան լաբորատոր հետազոտությունների իրականացումը տնային պայմաններում՝ բժշկի նշանակման հիման վրա: Տնային այցի ընթացքում իրականացվել է արյան նմուշառում՝ լաբորատոր հետազոտությունների համար, ինչպես նաև հաճախակի կատարվում է արյան գլյուկոզայի մակարդակի (շաքարի) չափում՝ առողջական վիճակի վերահսկման և բժշկական ցուցումների պատշաճ իրականացման նպատակով:

Ծրագրի շրջանակներում բուժքույրերը շարունակում են տեղամասային պոլիկլինիկայից անվճար ստանալ համապատասխան դեղորայք: Հաշվետու ժամանակահատվածում մեկ տարեց անձ մահացել է:

Կենցաղային աշխատողները իրականացնում են շահառուի անհատական պլանով նախատեսված այցելություններ, կատարում են կենցաղային սպասարկում՝ տան մաքրություն, գնումներ, սննդի պատրաստում և այլ գործողություններ՝ անհատական կարիքներին համապատասխան:

Հոկտեմբերի 1-ին՝ Տարեցների միջազգային օրը, ԱԶԿ ՀԿ–ն իր շահառու տարեցների համար կազմակերպեց ջերմ, հոգատար և հիշարժան միջոցառում՝ հավատարիմ գործընկերների և հովանավորների ակտիվ մասնակցությամբ ու աջակցությամբ: Օրը մեկնարկեց զբոսանքով Արմավիրի նորաբաց այգում, որտեղ տարեցները հնարավորություն ունեցան վայելելու թարմ օդը, գեղեցիկ միջավայրը

և հաճելի շփումը: Այնուհետև տոնական ծրագիրը շարունակվեց «ԲԱՑԱՏ» սրճարանում՝ համեղ և առատ հյուրասիրությամբ, որը ստեղծեց ուրախ և ջերմ մթնոլորտ: Միջոցառման հատուկ հյուրն էր Կարաբալան, որի մասնակցությունը օրը վերածեց իսկական տոնի՝ պարգևելով տարեցներին անկեղծ ժպիտներ, դրական հույզեր և հիշարժան պահեր: Միջոցառման կազմակերպմանը ակտիվորեն ներգրավված էին բոլոր հովանավորները. հրուշակագործի կողմից տրամադրվել էր տոնական տորթ և քաղցրավենիք, իսկ վարսահարդարները տարեցներին գեղեցկացրել էին թե՛ տնային պայմաններում, թե՛ գեղեցկության սրահում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Ամսական 49 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների մատուցում,
- Սոցիալական ծառայության տրամադրում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ի սոցիալական էջում
https://www.facebook.com/reel/818668347371585
https://www.facebook.com/reel/799894436093169

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման խոչընդոտներ չեն գնահատվել: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Շահառուների ցուցակը կցված է հաշվետվությանը:

Քանի որ ներկայացվող հաշվետվությունը այս տարվա վերջին հաշվետվությունն է, հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար կիրականացվեն գործողություններ՝ համաձայն նոր կնքվող պայմանագրի.

- Շահառուների կարիքների գնահատում, անհատական սոցիալական ծրագրերի կազմում, պայմանագրերի կնքում,
- Ծառայությունների մատուցում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| Ծրագրի շրջանակում համագործակցում ենք հովանավորների հետ, ովքեր մեր տարեցներին ծննդյան օրերին նվիրում են անվճար տորթեր, կտրում ու խնամում նրանց մազերը: Ունենք նաև հովանավորներ, ովքեր նվիրում են գեղեցիկ ծաղիկներ և հագուստ: |

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2025.12.23 12:04:11 AMT